

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
_Լևոն Մկրտչյան-ին

ՀՀ ԶԱՂԱԶԱՑԻ
Էմին Երիցյան -ից
(ղիմողի անուն, ազգանուն)

Ք. Երևան, 093404853, eminyeritsyan@caa.am _
(բնակության վայր, հեռախոսի համար, Էլ.փոստի հասցե)

Հայաստանի համայնքների միություն ԻԱՄ
Պետ. Գրանցման համար՝ 211.150.05154
(կազմակերպության լրիվ անվանումը, պետ.գրանցման համարը)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային
խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. __Հետաքրքրվածության նամակ__
2. __Անփոփ տեղեկանք վերջին 2 տարվա գործունեության վերաբերյալ__
3. __Համառոտ CV__

Դիմող՝



Էմին Երիցյան

Հայաստանի համայնքների միության նախագահ

< 03 > մայիսի



« ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք No 10730-16
« 03 » 05 2016թ.

*Հետաքրքրվածության նամակ և
ամփոփ տեղեկանք գործունեության մասին*

Հայաստանի համայնքների միությունը հիմնադրվել է 1997թ., վերակազմակերպել է 2009 թվականին: Միության իրավակազմակերպական տեսակն է՝ իրավաբանական անձանց միություն:

Միությանն անդամակցում են Հայաստանի բոլոր համայնքները: Միությունը ներկայացնում է Հայաստանի համայնքների միասնական ձայնը Հայաստանում և Հայաստանից դուրս:

Տեղական իշխանություններին օրենքով վերապահված են լիազորություններ կրթության ոլորտում: Միաժամանակ, համայնքները և Միությունը հանդես են գալիս որպես կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական շահառուներից մեկը, ինչով և պայմանավորված, կազմակերպությունը ուղղակիորեն հետաքրքրված է ՀՀ կրթության նախարարին կից հասարակական խորհրդում ներկայացուցիչ ունենալու հարցում: Դա հնարավորություն կտա խորհրդում ներկայացնել Հայաստանի տեղական իշխանությունների միասնական կարծիքը՝ արահովել հետադարձ կապը:

Բացի այդ Միությունը աջակցում է և ներգրավված է բազմաբնույթ, այդ թվում կրթության ոլորտին վերաբերող ծրագրի իրականացմանը, ինչպես նաև ներգրավված է քաղաքականությունների մշակման գործընթացներում Հայաստանում և Հայաստանից դուրս:

Միությանը յուրաքանչյուր տարի իրականացնում կամ աջակցում է մի քանի տասնյակ ծրագրերի իրականացմանը, որոնց մի զգալի հատվածը վերաբերում է կրթության ոլորտի՝ համալսարանական, մասնագիտական, հանրակրթական,

նախադպրոցական ոլորտներում, ինչպես նաև իրականացնում է հատուկ վերապատրաստումներ:

Ծրագրերի մի մասն իրականացվում է հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում: Մասնավորապես, Միության գործընկեր Ֆրանսիայի Ռեոն Ալպ ռեգիոնը տարեկան հատկացնում է շուրջ 300 հազար եվրո միջոց:

Միությունը պաշտոնական պատվիրակություններ ունի Եվրոպայի խորհրդում և Եվրոպական Միության ԱլՖ Տեղական ու տարածքային իշխանությունների մշտական Կոնֆերանսում՝ հնարավորություն ունենալով մասնակցել քաղաքականությունների ձևավորմանը նաև եվրոպական հարթակներում:

Ուստի, առաջարկում ենք նաև Միության Նախագահ Էմիլ Երիցյանի թեկնածությունը ՀՀ կրթության նախարարին կից հասարակական խորհրդում ընդգրկելու համար: